

Русские источники о геноциде армян в Османской империи 1915—1916 годы. (Сборник документов и материалов). Выпуск I. Составители Г. А. Абраамян, Т. Г. Севан-Хачатрян, Ереван, 1995, 272 с.

Հայոց 1915—1916 թթ. Մեծ եղեռնից հետո, անցած ութ տասնամյակների ընթացքում, ինչպես մեղանում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում, դարի այդ հրեշավոր բարբարոսության մասին հրատարակվել են բազմաթիվ հուշագրություններ, ուսումնասիրություններ ու փաստաթղթերի ժողովածուներ հայերեն և եվրոպական լեզուներով։ Լույս են ընծայվել անգլիական, ֆրանսիական, գերմանական, ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների պետական արխիվներում պահվող նյութերը Հայկական Հարցի և հայոց ցեղասպանության մասին։ Համեմատաբար բիշ հուշագրության է արժանացել ռուսական արխիվների համապատասխան նյութերի հրապարակման գործը։ Այդ պակասը զգալի չափով լրացնում է գրախոսվող աշխատությունը։

Ժողովածուի կալմոդ պատմաբաններ Հ. Աբրահամյանը և Տ. Սևան-Խաչատրյանը հետապնդել են մի նպատակ՝ լուսարանել Մեծ եղեռնի պատմությունը ըստ ռուսական աղբյուրների, հրապարակել հայոց ցեղասպանության վերաբերյալ ռուսական պաշտոնական սկզբնաղբյուրները, ռուս առաջադիմական միտքը ներկայացնող հասարակական ու քաղաքական դոկտրինների հոգովածներն ու ասույթները, այդ ուղղությամբ ռուս զրականության ստեղծած մնայուն մյուս արժեքները։ Ընդհանուր առմամբ նրանց հաջողվել է իրենց ուժերի ներածին չափով լուծել խնդիրը։

Ժողովածուի առաջաբանում, որի հեղինակն է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, տրվում է երիտթուրքերի կողմից նախապես մշակված հայերի ցեղասպանության ծրագրման և կենսագործման հակիրճ բնութագիրը, մարդկային ցեղի պատմության մեջ նախճիկ կատարելու նախօրինակը շունեցող մեթոդների համալիրը, որն ընդունակ էր աշխարհ հանել միայն նախամարդու բնադողով ու նորադարյան ռասիզմով շղթախված պանթուրքիստների երևակայությունը։

Օղտագործելով պատերազմական իրադրությունը, երիտթուրքերը 1915 թ. իրենց կուսակցության կենտրոնի նիստում որոշեցին արևմտահայերի տեղահանման և բնաջնջման

կոնկրետ եղանակները։ Թուրքական տեղական իշխանության մարմինները մեծագույն ճշգրտությամբ էին կատարում իթթիհատական կենտրոնի, էնվեր, Բալեաթ, Ջեմալ շոլիխատների և ռապետության բոլոր կարգադրությունները։ Ամբողջ կայսրությունով մեկ հրամաններ էին ուղարկվում հայերին Միջագետք աքսորելու մասին։ Հրամանները միանգամայն ուղղակի էին և մանրամասն՝ բացառություն չանել ո՛չ ծերերին, ո՛չ մանուկներին, ո՛չ հիվանդներին և հղի կանանց։ Աքսորականների տներն ու ամբողջ ունեցվածքը բռնագրավում էին։ Առաջաբանում ըստ արժանվույն է գնահատված հայոց մեծ ողբերգության նկատմամբ ռուս առաջադեմ հասարակայնության դրսևորած մեծագույն հումանիզմը։ Յու. Վեսելովսկին, Վ. Բրյուսովը, Մ. Գորկին, Ս. Գորոզեցկին, Մ. Կովալևսկին, Ա. Կուլբեյակինը և շատ ուրիշները իրենց զրավոր ու բանավոր բողոքի ձայնը բարձրացրին թուրքական գաղանթությունների դեմ։

Ըստ կարգի և հաջորդայնության գրքում չափազանց ուշագույլ են Կովկասյան ճակատում ծավալված պատերազմական գործողություններին հայերի մասնակցության և կամավորական շարժման վերաբերյալ փաստաթղթերն ու նյութերը։ Այդ մասին են պատմում Լոնդոնում և Փարիզում ռուսական դեսպաններին Հ. Ջավրիեի ներկայացրած դրույթները, «Армяне и война» ամսագրի առաջին համալրում տպագրված «Հայկական կամավորական շարժումը», «Հայերը և պատերազմը» հոդվածները։

Ժողովածուի և այլ հրատարակությունների նյութերից ակներախ է, որ Ռուսաստանի հանդեպ մշտամենա հավատը համակել էր հայկական հասարակության բոլոր խավերին, որոնք հանդես էին գալիս ռուսական ղորքերի օգնությամբ։ Արևմտյան Հայաստանն ազատագրելու կոչելով՝ ամենուրեք համալրելով և խտացնելով ռուսական կանոնավոր զորամասերի և հայ կամավորական ջոկատների շարքերը։ Արևմտյան Հայաստանի ազատագրումը հուզում էր ամբողջ հայ ժողովրդին և պատահական չէ, որ կամավորական շարժումը լայն արձագանք

գտավ ոչ միայն Ռուսական կայսրության մեջ, այլև ամբողջ աշխարհի հայաբնակ վայրերում: Ժողովածուում ընդգրկված նյութերը մեկ անգամ ևս հաստատում են հայ ազատագրական մտքի և պատմագրության առաջադիմական թևի այն տեսակետը, թե ընդհանուր առմամբ ռուս պետականությունը միշտ էլ իր արտաքին քաղաքականությունն իրականացնելիս կարևորել է հայկական գործոնի դերը: Դեպի հարավ իր առաջնադաս ընթացքում Ռուսաստանը եթե ոչ ամբողջապես, ապա գոնե նվազագույնս սատարել է հայկական ակնկալությունների կայացմանը, իր ներքին ու արտաքին քաղաքականությունն էլ: Նյութերից բխող հնարավորությունների սահմաններում առավելագույնս ներպատկեր հայոց ազգային համախմբմանը: Այս առումով ուշագրավ է Ռուսաստանի Պետդումայի 1916 թ. մարտի 11-ի նիստում ամբողջ պատգամավորական կորպուսի կողմից դումայի անդամներ Պ. Միլյուկովի և Մ. Պապաջանովի հայանպաստ ճառերի միահամուռ պաշտպանությունը: «Ռուսաստանին հավատարմության համար տուժած քրիստոնյաները, — իր ճառում ասում է Միլյուկովը, — պետք է տեղավորվեն իրենց հայրենի հողերում... Հայաստանի և հայերի ճակատագիրը մեզ համար թանկ են...»:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում արտաքին գործերի մինիստր Ս. Գ. Սադոունի և Փարիզի ու Նիդհեյմի դեսպանների անվան հետ կապված այն նյութերը, որոնք թելադրված են պատերազմական իրադրության պայմաններում համամարդկային և միջազգային օրենքների պահպանման ուղղությամբ բոլոր շահագրգիռ ուժերի ջանքերի միավորման անհրաժեշտությունից: Այսպես, օրինակ, հայկական կոտորածների սկսվելու հենց սկզբներին թուրքական իշխանությունների գործողությունների գատնապարտմամբ առաջինը հանդես եկավ Ռուսաստանը: 1915 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Սադոունի «Հեռագրում է Փարիզի և Նիդհեյմի դեսպաններին» պահանջներ: Նշում է. «...Մինիստրությունում ստացվել են նոր տեղեկություններ Ասիական Թուրքիայում տեղի ունեցող անարխիայի և թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածների մասին: Բարեհաճեցեք առաջարկելու ֆրանսիական (անգլիական) կառավարությանը մեզ հետ և Անգլիայի (Ֆրանսիայի) հետ միասին հրատարակելու դիմում Դռանը, որտեղ հայերի կոտորածի անձնական պատասխանատվությունը դրվի Թուրքիայի Մինիստրների խորհրդի բոլոր անդամների վրա, ինչպես նաև այդ դեպքերի հետ կապ ունեցող բոլոր քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների վրա» (էջ 14):

Հայտնի է, որ Ռուսաստանի ճնշման տակ միայն դաշնակիցները տեղի տվեցին և երեք տերությունների (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) հայտարարությունը Թուրքիայի ոճրագործ քաղաքականությունը որակեց որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»:

Արևմտահայերի տեղահանության և զանգվածային կոտորածների մասին գրախոսվող ժողովածուն շատ սրտակեղև նյութեր է պարունակում: Դրանք ռուսական արխիվներից, հեղինակավոր հրատարակություններից, հասարակական-քաղաքական ամսագրերից ու թերթերից վերցված նյութեր են, ռուս աստիճանավորների, լրագրողների ու թղթակիցների հոդվածներ, նամակներ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Армянский вестник», «Армяне и война», «Кавказское слово», «Кавказ», «Русские ведомости», «Речь» և այլ պարբերականներում տպագրված նյութերը, ժամանակի ճանաչված հայ և ռուս գործիչների հոդվածները, պաշտոնական գրություններն ու թղթակցությունները, որոնցում բացահայտված և լուսարժանված են Հայկական Հարցում տերությունների դիրքորոշումը, ինքնապաշտպանական կոպիտները, ջարդերը, փախստականների վիճակը և այլն:

Մամուլից քաղված մի շարք նյութերում պատմվում է այն մասին, որ Թուրքիայում գերմանական սպաների մեծամասնությունը խորհուրդ է անձամբ մասնակցել է ջարդերի կազմակերպմանն ու իրականացմանը: «Кавказское слово» թերթում տպագրված լուրերում հատկապես բերված են շատ փաստեր այն մասին, թե ինչպես գերմանական ռազմաթիվ սպաներ գործունե մասնակցություն են ունեցել թուրք ջարդարարների վայրագություններին:

Ժողովածուում տեղ են գտել պատմաբան, հրապարակախոս ու արվեստաբան Ալեքսեյ Զիվելեզովի հոդվածները: «Գերմանացիները, թուրքերը և հայերը» հոդվածում հայ գիտնականը գրում էր, որ Չինգիզ խանի, Թամերլանի ժամանակներում և այդ ժամանակներից ի վեր հայերը չեն ապրել նման սարսափներ: Ըստ հեղինակի, եթե միջնադարյան խավարամուլները մարդկանց սպանում էին տեղ դառնալու համար նրանց ունեցվածքին, ապա ժամանակակից թուրք բարբարոսներն այդ ամենին դուրսեցնում են նաև քաղաքական, ցեղասպանություն հետապնդող նպատակներ: Նրանք հայերի համատարած ոչնչացմանը մասնակից դարձրին «քաղաքակրթված» Գերմանիային, որը որպես հավատարիմ դաշնակից ոչինչ չէր խնայում Արևմտյան Հայաստանը հայերից

մարբերու և պանթուրանական ծրագրերի իրականացման համար Այս իրողության հաշվառմամբ է, որ Ա. Զիվելզովը ճիշտ էր համարում և պաշտպանում պատերազմը մինչև հաղթական ավարտին հասցնելու տեսակետը, բանի որ միայն Գերմանիայի լիակատար ջախջախման հետևանքով կվերջանար շովինիստների տիրապետության մեծ սպետականության մոլուցքը (էջ 55)։

1915 թ. օգոստոսի 4-ին «Русские ведомости» թերթում տպագրված «Հայաստանի վերբերը» հոդվածում Զիվելզովը այն միտքն էր հայտնում, որ ռուսական կառավարությունը չպետք է բավարարվի հայ գաղթականության համար կատարվածով, քանի որ միայն Կովկասում 200 հազարից ավել այդ դժբախտ զանգվածը ոչ մի տեղից օգնության հույս չունի, բացի Ռուսաստանից (էջ 53)։ Եվ Զիվելզովը ճիշտ էր անում, որ հույսը կասյում էր միայն Ռուսաստանի հետ ժողովրդագրության տեղափոխման և այլապես փաստաթղթերն իսկ դալիս են հաստատելու նրա հավատամքի ճշմարտացիությունը։

Մի շարք նյութերի՝ «Արտարին գործերի միևնույն Ս. Դ. Սադունովը Ռուսաստանի ֆինանսների միևնույն», «Հաղորդագրություն թուրքահայերին օգնություն ցույց տալու ուղղությամբ ռուս գործիչների ձեռնարկած միջոցառումների մասին», «Գլխավոր լիազորի հաղորդումը Կովկասում գաղթականների տեղափոխման մասին», «Հայ որդերի ճակատագիրը» և բազմաթիվ հաղորդումների հետ ծանոթությունն ակամա ջերմ զգացումներ է հարուցում ռուս պետականության և այն կադմակերպությունների, բարեգործական ընկերությունների նկատմամբ, որոնք բոլոր հնարավոր միջոցներով, շարունակվող պատերազմի պայմաններում, օգնում և աջակցում էին օսմանյան յաթաղանից հրաջրով փրկված հայ խլտկներին։

Ցարական կառավարությունը մինչև փետրվարյան հեղափոխությունը հայ գաղթականությանն օգնելու համար պետական միջոցներից բաց է թողնում ավելի քան 25 միլիոն ռուբլի, այն ղեկավարում էր 1915 թ. նոյեմբերին արտաքին գործերի միևնույն Գրինստենների միևնույն խնդրում էր 500 հազար ռուբլի հատկացում։ Այս օրերին հայ գաղթականների ֆիզիկական դրությունն ինչպիսիք չէր միայն, որ հետաքրքրում էր Ա. Զիվելզովին։ «Армянский вестник»-ի 1916 թ. նոյեմբերի 27-ի համարում տպագրված «Ա. Տրեպոլի հայտարարության առթիվ» հոդվածում, նա մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի արևելյան քաղաքականության գալիք հաջողությունների հետ։ Ինչպիսիք, նա չէր կարծում, որ եվրոպա-

կան հաղթող պետություններին կհաջողվի Թուրքիան այնպես բաժանել, որ այն այլևս դադարի որպես պետություն գոյություն ունենալուց։ Բայց Զիվելզովը լավատեսաբար ենթադրում էր, որ եթե Թուրքիայից անջատվեն Միջագետքը, Արարիան, Սիրիան, Հայաստանը, Կիլիկիան, Լադիստանը և Փոքրասիական ծովափերի արևմտյան ափը, ապա այդ էլ շատ հարմար կլինի դալիք Հայաստանի համար, քանի որ դրանից հետո Արևմտյան Անատոլիայում ?—8 միլիոն թուրքերով բնակեցված Թուրքիան վտանգ չի ներկայացնի հարևանների համար։ Ըզոր Ռուսաստանի հզոր հովանավորության ներքո, Լեզափակում էր Զիվելզովը, Թուրքական Հայաստանը հանգիստ կարող է նալել գալիքին և ստեղծել իր պետականությունը՝ հետագայում Երկրորդ շունենալով ինչ-որ բարգաւթություններից։ Ա. Զիվելզովը հայ ժողովրդի տեսակցության այսպես էր դնահատում Ա. Տրեպոլի հայտարարության այն մասը, որը վերաբերում էր Կ. Պոլսին և ներուցներին, այսինքն՝ դարձալ պատերազմի հաղթական ավարտի մեջ նշմարում արևմտահայության աղատագրության այս կամ այն կերպը (էջ 205)։

Ժողովածուն ունի նաև «Ռուս գրողները Հայաստանի մասին» բաժին, ուր տեղ են գտել բազմաթիվ ռուս գրողների՝ հիմնականում չափածո ստեղծագործությունները։ Տակավին 1890-ական թթ. և ընթացիկ դարի սկզբին մարդկային վրդովմունքը թուրք ջարդարարների նկատմամբ արտահայտեցին Ե. Ալիբեկովան, Եվ. Մորոզովը, Մ. Գորկին և ուրիշները։ Ալիբեկովայի «Ժաման է» բանաստեղծության մեջ հայոց փրկությունը բանաստեղծուհին տեսնում էր միայն Ռուսաստանի օգնության և աջակցության մեջ։

Ռուս բանաստեղծներից առաջինը Յու. Վեսելովսկին էր, որ Հայաստանին ու հայերին նվիրեց բանաստեղծությունների մի ամբողջական շարք («Հայերին», «Հայաստանում», «Ավերակների վրա», «Վարդան Մամիկոնյանի մահը», «Հայ կալանավորի մտորումները» և այլն), որը հայ տառապանքի նկատմամբ անկեղծ ցավի խորունկ արտահայտություն էր։

1915 թ. Կովկասյան ռազմաճակատ է գալիս բանաստեղծ Վասիլի Նեմիրովիչ-Դանշենկոն։ Ռուսական զորքերի դրաված արևմտահայկական տարածքներում նա ականատես է լինում թուրքական բարբարոսությունների ծրիացող հետքերին։ Արևմտահայերի ողբալի վիճակի հանդեպ հարազատի կարեկցությամբ են առկցուն նրա այն բանաստեղծությունները, որոնք տպագրվել են «Русское слово» և

«Армянский вестник» թերթերում: Մարտի-րոսվոդ ժողովրդի նկատմամբ տագնապով և կարեկցանքով են դրված բանաստեղծի «Հանուն ինչի», «Եփրատի ափին», «Դրոշ» բանաստեղծությունները, ուր հեղինակը ղայրույթով մեղադրում է հետադիմական և մեծապետական շովինիստներին, որոնք անտարբեր են հարուստ պատմության և մշակույթի տեր և «առաքելական մահապատիժը» նախընտրած հայ ժողովրդի հոգսերի ու վշտերի նկատմամբ:

Արևմտյան Հայաստանը, հայ ժողովրդի ավանդույթները, մշակույթը շատ հոգեհարազատ էին բանաստեղծ Ալեքսեյ Կուլեբյակինին: Նա ոռոսական բանակի զորահրամանատարներից էր, մեկն այն գեներալներից, որոնք գործուն մասնակցեցին մարտական գործողություններին: 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մարտը գեներալ Կուլեբյակինի բանաստեղծական սիրտը և հոգին մղկտում էին «մինչև վերջ ավերված և մահով հաղեցած» պատմական Վանի փլատակներում, ուստի պատահական չէ, որ Թիֆլիսում տպագրված նրա «Մհերի Դուռ» վանի արձագանքները» գիրքը իր խորաթափանցությամբ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Կովկասյան ճակատի, մասնավորապես Վանի ուղղությամբ կատարվող մարտական գործողությունների լուսաբանման տեսակետից:

Գրախոսվող ժողովրդավաճառում տեղ են գտել տեսաձի ու լսածի պոետական տպավորությունների անմիջական ներշնչանքով գրված, թախծոտ ու խոհական նրա բանաստեղծություններից՝ «Հին Վանը», «Վանի պաշտպանությունը», «Վանի անկումը», «Ավերված Վանը», «Բեն-Դիմախու» (դետ Վասպուրականում—Ն. Ս.), «Ուրախացող Վանը»: Ահա մի հատված «Վանի պաշտպանությունը» բանաստեղծությունից՝ Վահագն Դավթյանի թարգմանությամբ.

Կյանքը կբել է հինավուրց Վանում,
Արցունք է, ոխի բոց է ղայրագին,
Հայերը թրքաց շար ուժը վանում
Եվ սպասում են ոռոսաց բանակին:

Կուլում են ընդդեմ գունդ ու վաշտերի,
Գնում են ըմբոստ ինքնագոհության՝
Հանուն հայրենի լեռ ու դաշտերի
Եվ հանուն իրենց արդար գոյության...

Իսկ այստեղ, հեղինակը՝ բարդիների տակ
Ջորասյուններն են արդեն երևում,
Եվ լեռնաշխարհի վրա կապուտակ
Ռուսական աղատ դրոշն է թևում...

Հայոց ողբերգության տարիները ցնցեցին և ուրիշ ոռոս գրողների, որոնք իրենց ստեղծագործություններում նկարագրեցին Արևմտյան Հայաստանի ամայացման տեսարանները, նրա մոթված ու բնավեր ժողովրդի տառապանքը: Վ. Բրյուսովի, Ստ. Կրոտկիի և այլոց բանաստեղծություններում հույս էր հայտնվում, որ դիմակայուն հայկական ոգին, պայքարի կամքն ու անսպառ կենսունակությունը կվանեն ներկա և ղալիք «բոլոր հոգմերին, բոլոր ավերվածներին», և հայը կպահպանի իր սրբությունները և հպարտությամբ կկրի «իբր բազմադարյան պատմության դափնեպսակը» (Վ. Բրյուսով):

Հետաքրքրությամբ են կարդացվում Ս. Գորոդեցկու «Ալգի», «Ուր են նրանք», «Աղջկա ձեռքերը», Ալ. Կուլյուի «Ավերված Վանը», «Վանի գաղել», Ս. Ջարովի «Հայ եղբայրներին», «Մի ողբա աշուղ», Յու. Բարանովսկու «Հայաստանին», «Հայ ժողովրդին», Կ. Սայանսկու «Հայաստան» բանաստեղծությունները, Յու. Վեսելովսկու «Տառապող երեխաներ» և Վերա Դուդինայի «Մարդկային վշտի էջերից» գեղարվեստական ակնարկները:

Ամփոփենք, ինչ խոսք, ժողովածուն հաճելի նվեր է մեր ընթերցողներին: Բայց, կարծում ենք, որ այն կարող էր ավելի արժեքավոր լինել, եթե նրանում ընդգրկվեին ավելի շատ արխիվային նյութեր: Ցանկալի է, որ այդ կատարվի հաջորդ պրակում:

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ